ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 16 » հոկտեմբերի 2026թ. № 351-Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ԱՌՈՒՎԱՃԱՌՔԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԵՐԿԿՈՂՄԱՆԻ ԼՈՒԾԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ԿՆՔԵԼՈՒ ԵՎ ԳՆՈՐԴԻ ԿՈՂՄԻՑ ՎՃԱՐՎԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 466-րդ, 468-րդ և 469-րդ հոդվածները, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի և Արտաշես Սամվելի Աբգարյանի միջև 2026 թվականի օգոստոսի 14-ին կնքված՝ թիվ 3200 համարով նոտարական կարգով վավերացված հողամասի առուվաճառքի պայմանագրի լուծման իրավական հիմքերը, ինչպես նաև կողմերի փոխադարձ համաձայնությունը՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ.

1. Համաձայնություն տալ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի և Արտաշես Սամվելի Աբգարյանի միջև 2026 թվականի օգոստոսի 14-ին կնքված՝ թիվ 3200 համարով հողամասի առուվաճառքի պայմանագիրը երկկողմանի լուծելու վերաբերյալ համաձայնագիր կնքելուն:
2. Կազմակերպել պայմանագրի լուծման վերաբերյալ համաձայնագրի՝ նոտարական կարգով կնքման գործընթացը:
3. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ Մ. Հովսեփյանին նախապատրաստել գնորդի կողմից վճարված հողամասի վաճառքի գինը՝ 7.600.000 (յոթ միլիոն վեց հարյուր հազար) և չափագրման, վկայականի ձեռքբերման, գույքի գնահատման և միասնական տեղեկանքի համար համայնքի կողմից իրականացրած ծախսերի փոխհատուցումը՝ 94.600 (իննսունչորս հազար վեց հարյուր) ՀՀ դրամ գումարների վերադարձման համար անհրաժեշտ փաստաթղթերը և կազմակերպել գումարների վերադարձը՝ օրենքով սահմանված կարգով:
4. Սույն որոշման կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել համայնքապետարանի աշխատակազմի ղեկավար Անի Մարտիրոսյանին:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով:

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ Վ. ՊԱՊԻԿՅԱՆ

Կ.Տ

2026թ. հոկտեմբերի 16
գ. Լոռի Բերդ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Լոռու մարզ, Լոռի Բերդ համայնք,
գ. Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի 7

Հեռ. 0256-2-14-75
Էլ. փոստ.Loriberdhamaynq2017@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«19» հոկտեմբերի 2026թ. № 352-Ա

ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետի և ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. N2387-Ն որոշման պահանջներով՝

ո ր ո շ ու մ ե մ.

1. ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի Ագարակ բնակավայրի 06-009-0051-0068 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տրամադրել՝ ՀՀ Լոռու մարզ, Լոռի Բերդ համայնք, Ագարակ բնակավայր, 8-րդ փողոց, թիվ 24 բնակելի տուն փոստային հասցեն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ Վ. ՊԱՊԻԿՅԱՆ

Կ.Տ

2026թ. հոկտեմբերի 19
գ. Լոռի Բերդ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Լոռու մարզ, Լոռի Բերդ համայնք,
գ. Լոռի Բերդ Աշոտ Երկաթի 7

Հեռ.՝ 0256-2-14-75
էլ. փոստ՝ loriberdhamaynq2017@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«20» հոկտեմբերի 2026թ. № 353-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ԳՅՈՒՂԻ 06-044-0015-0010 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0.2797 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԲԱԺԱՆՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԱՌԱՋԱՑԱԾ 0.1911 ՀԱ ԵՎ 0.0886 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՆԵՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՆ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ, հիմք ընդունելով «Գնել Առաքելյան» ԱՁ-ի կողմից կազմված բաժանման հատակագիծը, 06012WJHXPVM և 06012SGLDBT2 ծածկագրերով անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին քաղվածքը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հաստատել Լոռի Բերդ համայնքի Լոռի Բերդ գյուղի 06-044-0015-0010 կադաստրային ծածկագրով հողամասի բաժանումից առաջացած 0.1911 հա մակերեսով հողամասի փոստային հասցեն՝ ՀՀ Լոռու մարզ, Լոռի Բերդ համայնք, գ. Լոռի Բերդ, Զորավար Անդրանիկի փողոց, թիվ 13 բնակելի տուն փոստային հասցեն:
2. Հաստատել Լոռի Բերդ համայնքի Լոռի Բերդ գյուղի 06-044-0015-0010 կադաստրային ծածկագրով հողամասի բաժանումից առաջացած 0.0886 հա մակերեսով հողամասի փոստային հասցեն՝ ՀՀ Լոռու մարզ, Լոռի Բերդ համայնք, գ.Լոռի Բերդ, Զորավար Անդրանիկի փողոց, թիվ 13/2 հողամաս փոստային հասցեն:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ Վ. ՊԱՊԻԿՅԱՆ

կ.Տ

2026թ. հոկտեմբերի 20
գ. Լոռի Բերդ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Լոռու մարզ, Լոռի Բերդ համայնք,
գ. Լոռի Բերդ Աշոտ Երկաթի 7

Հեռ.՝ 0256-2-14-75
էլ. փոստ՝ loriberdhamaynq2017@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«20» հոկտեմբերի 2026թ. № 354-Ա

ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. N2387-Ն որոշման պահանջներով՝

ո ր ո շ ու մ ե մ.

1. ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի Կողես բնակավայրի 06-056-0009-0018 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տրամադրել՝ ՀՀ Լոռու մարզ, Լոռի Բերդ համայնք, գյուղ Կողես, 5-րդ փողոց թիվ 12 բնակելի տուն փոստային հասցեն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ **Վ. ՊԱՊԻԿՅԱՆ**

Կ.Տ.

2026թ. հոկտեմբերի 20
գ. Լոռի Բերդ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Լոռու մարզ, Լոռի Բերդ համայնք,
գ. Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի փող., 7

հեռ.՝ 0256-2-14-75
էլ. փոստ՝ loriberdhamaynq2017@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

«22» հոկտեմբերի 2026թ. № 355-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ԳՅՈՒՂԻ 06-044-0015-0010 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ, ՄԱՐԻՆԵ ՄԱՄԻԿՈՆԻ ՆԱԶԱՐՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՐՊԵՍ ԵՐԿՈՒ ԱՌԱՆՁԻՆ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐ ՏԱՐԱՆՋԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով, Հիմք ընդունելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 08062021-06-0045 վկայականը, 06012WJHXPVM և 06012SGLDBT2 ծածկագրերով անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, «Գնել Առաքելյան» ԱՁ-ի կողմից տրված հողամասի բաժանման հատակագիծը՝

որոշում եմ.

1. Տարանջատել Լոռի Բերդ համայնք, գյուղ Լոռի Բերդ, Զ. Անդրանիկի փողոց թիվ 13 բնակելի տուն հասցեում գտնվող, Մարինե Մամիկոնի Նազարյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասը՝ համաձայն «Գնել Առաքելյան» ԱՁ-ի կողմից տրված թիվ 1 և թիվ 2 հատակագծերի:
2. Լոռի Բերդ համայնք, գյուղ Լոռի Բերդ, Զ. Անդրանիկի փողոց թիվ 13 բնակելի տուն հասցեում գտնվող տարանջատված գույքերին տրամադրել փոստային հասցեներ.

ա. 0.1911 հա մակերեսով Մարինե Մամիկոնի Նազարյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասին և նրա վրա գտնվող բնակելի նշանակության 184,0 քմ մակերեսով շինությանը տրամադրել նոր փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ, Լոռի Բերդ համայնք, գ. Լոռի Բերդ, Զորավար Անդրանիկի փողոց, թիվ 13 բնակելի տուն:

բ. 0.0886 հա մակերեսով Մարինե Մամիկոնի Նազարյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասին տրամադրել նոր փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ, Լոռի Բերդ համայնք, գ.Լոռի Բերդ, Զորավար Անդրանիկի փողոց, թիվ 13/2 հողամաս փոստային հասցեն :

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ ՎԱՀՐԱՄ ՊԱՊԻԿՅԱՆ

Կ.Տ.

2026թ. հոկտեմբերի 22
գ. Լոռի Բերդ